Մրցույթ՝ Երևանի Ղ. Ալիշանի անվան հ. 95 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի **«Հայոց լեզու և գրականություն» (10 դասաժամ), «Պատմություն» (16 դասաժամ), «Ֆիզկուլտուրա» (27 դասաժամ), «Ռուսաց լեզու» (22 դասաժամ), «Աշխարհագրություն» (3 դասաժամ), «Ֆիզիկա» (27 դասաժամ) «ՀԵՊ» (12 դասաժամ)** առարկայի ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1. դիմում (Ձև 1),

2. մեկ լուսանկար 3x4 չափսի,

3. բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

4. անձը հաստատող փաստաթուղթ,

5. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

6. ինքնակենսագրություն (Ձև 5),

7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ ,

8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

10. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ **սեպտեմբեի 20-ը** ներառյալ, ամեն օր՝ **ժամը 10:00-ից 15:00**-ը, բացի շաբաթ և կիրակի, ինչպես նաև այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին**, Երևանի Ղ. Ալիշանի անվան հ. 95 միջնակարգ դպրոցում: Հասցեն՝ ք. Երևան, Նուբարաշեն, 13-րդ փ., 1 շ.:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 47-60-41 հեռախոսահամարով: